բուն ճիշտ ցոյց տալ զԿապոյտ և նոյա շրջականերն, եթէ չը կարողացայ ըստ կարելւոյն նկարագրել թող ներեն ինձ, վասն զի այս սարսափ ազդող ձորէն առանց կանգ առնելու անցած եմ հինգ ժամ արագ արագ խիստ դժուարամատչելի ժայռերէ սողալով՝ երբեմն ձորի այս ու այն եզրէն խոնարհած եմ քրտինքի մէջ լողալով։

Յուսամ այս ճանապարհորդութիւնս բոլորովին ապարդիւն չը պիտի լինի, վասն որոյ ձեռք զարկի տեսածս և ուշադրութեամբ տեղեկացածս գրի առնել։

Կապուտայ ձորին թուրքեր և հայեր Կապուտ, իսկ քրդեր Խանդութայ ձոր կասեն, և բերդին ևս կալա Խանդուտ։

Որպէս ասացինք, Կապուտայ ջուրն երկու մեծ ճիւղերէ կը կազմուի, առաջինը և երկարը Խշրք ջուրն է, որ Բօզ-Թէփէ լերան հիւսիսային կողերից իջած երկու ջրից կազմուած է և քիչ վայր Շէրք անունով խոր անդունդ ձոր մի կազմելով՝ արևելեան հիւսիսային ուղղութեամբ առաջ կընթանայ $^1/_2$ ժամ որմէ յետոյ Կօլէ Դէյրան [1] (բադի լիճ) ջուրն, ուստի ևս $^1/_2$ ժամ խոնարհ Զուխուր-Զամ լճակէ բղխած ջուրն, որ 1 ժամ հարաւային բարձրութենէ մի կիջնայ։ Զուխուր-Զամի և Շէրքայ ջրերն միանալով Կապոյտ անուամբ արևելեան հիւսիս կը հոսի, մի ժամից ձախ կը թողու Իսլի մաղարա երկու մեծ այրերն, նաև չորս ժամ երկարութեան վերայ (սկսած վայրից) ի ձախ կը թողու բարձր Թէքէ-Բինէ (նոխազանց բնակարան) լերան շարունակութիւնը։

---

1. Կօլէ Դէյրան, $^3/_4$ ժամ Բօզ-Թէփէի եւ որոյ խառնուրդէն $^1/_2$ ժամ խոնարհ Խշրք. ուստի ջուր կիջնայ Մատուռ լերան յետեւից։